ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2020 թ.

«ԱՆՏԻՖԵՅՔ» ԿԱՅՔԻ ԼՐԱԳՐՈՂ
ՍՈՆԱ ԱՄԻՐՅԱՆԻՆ

էլ. փոստ՝ antifakeam@gmail.com

Ի պատասխան Ձեր 21.04.2020թ.-ի առցանց հարցման

Հարգելի տիկին Ամիրյան

2020 թվականի հունվար-մարտ ամիսներին ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակիցներին տրվել է 33485.9 հազ. դրամ պարգևատրում (նշված գումարների մեջ ներառված են նաև պարգևատրումներից օրենքով սահմանված կարգով կատարվող պահումները՝ եկամտահարկ և այլն): Այդ թվում՝

ա/ «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» հոդվածով հատկացված գումարներից՝ 18546.2 հազ. դրամ, որը 2019 թվականի 2-րդ կիսամյակի կատարողականների արդյունքների հիման վրա տրվել է մարզպետարանի քաղաքացիական ծառայողներին՝ համաձայն «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի: Նշված հոդվածով պարգևատրումներ վճարվում են տարվա ընթացքում 2 անգամ՝ դեռևս 2002 թվականից սկսած:

բ/ «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով հատկացված գումարներից՝ 14939.7 հազ. դրամ, որից՝ հունվար ամսվա կատարված աշխատանքների համար վճարվել է 7047.6 դրամ, փետրվար ամսվա կատարված աշխատանքների համար՝ 7892.1 հազ. դրամ: Կորոնավիրուսի համաճարակի հետ կապված մարտի ամսվա կատարված աշխատանքների համար մարզպետարանի աշխատակիցներին պարգևատրումներ չեն վճարվել: Նախատեսվում է նշված գումարն ուղղել Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերման միջոցառումներին:

Մարզպետի պարգևատրումները իրականացվում են գաղտնի ընթացակարգով և այն ենթակա չէ հրապարակման: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ մարզպետը ներկայացնում է գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիր, ուստի վճարված պարգևատրման չափի վերաբերյալ տեղեկատվություն կարող եք ստանալ ներկայացվող հայտարարագրից:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հարգանքով՝ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

կատ. Ա. Բեջանյան
հեռ. /0322/ 4 34 99